ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 10

«24» 01 2017 թ. ք.Երևան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳԾՈՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 8-ի ՀՕ-Ն 209-Ն օրենքը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշման 16-րդ կետը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի «Փորձաքննությունների կատարման ծառայության նախահաշվային արժեքի մասին» N 79-Ն որոշումով, «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 30-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի «04. Փորձաքննությունների ծառայություններ» ծրագրով Հայաստանի Հանրապետության դատախազությանը

հատկացված միջոցների հաշվին դատական փորձաքննությունների կատարման ծառայությունները ձեռք բերել Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունից՝ Հայաստանի Հանրապետության դատարաններից (քրեական գործերով) կամ քրեական հետապնդման մարմնից ստացված համապատասխան փորձաքննություն նշանակելու մասին որոշումների հիման վրա:

2. Փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա նախահաշվային արժեքը՝ 2017 թվականի համար սահմանել 458 դրամ:

3. Հաստատել փորձաքննությունների կատարման ծառայությունների միավորի նախահաշվային արժեքը և ձեռքբերման ենթակա քանակն ըստ փորձաքննությունների տեսակների՝ համաձայն հավելվածի (կցվում է):

4. 2017 թվականի ընթացքում տվյալ ծրագրին հատկացումների ընդհանուր գումարի սահմաններում, անհրաժեշտության դեպքում փոփոխել սույն հրամանի հավելվածով սահմանված փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերման ենթակա քանակն ըստ փորձաքննությունների առանձին տեսակների, եթե Հայաստանի Հանրապետության դատարանների (քրեական գործերով) կամ քրեական հետապնդման մարմինների կողմից ըստ այդ տեսակների նշանակված փորձաքննությունների փաստացի քանակը չի համապատասխանում հավելվածով նախատեսվածին:

5. Սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 2-օրյա ժամկետում այն հրապարակել Հայաստանի Հանրապետության դատախազության պաշտոնական կայքէջում:

6. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

7. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, և դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Ա.Դավթյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
«24» հունվարի 2017թ.
N 10 հրամանի

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ

Փորձաքննության տեսակի անվանումը	Միավորի նախահաշվային արժեքը (դրամ)	Քանակը (հատ)	Ընդամենը՝ նախահաշվային արժեքը (հազ. դրամ)
1	2	3	4
Ձեռագրաբանական	20610	710	14633.1
Փաստաթղթաբանական	27480	1027	28222.0
Հեղինակային	20610	7	144.3
Ֆոտոտեխնիկական	41220	58	2390.8
Դիմանկարային	41220	26	1071.7
Տեսաձայնագրառման և աուդիոձայնագրառման	54960	186	10222.6
Հետքաբանական	20610	457	9418.8
Ձգաբանական	27480	313	8601.2
Պայթյունատեխնիկական	41220	104	4286.9
Նյութագիտական	27480	1554	42703.9
Սննդային	27480	102	2803.0
Կենսաբանական/հողագիտական/	27480	230	6320.4
Հրդեհատեխնիկական	41220	187	7708.1
Շինարարատեխնիկական	27480	177	4864.0
Ճանապարհատրանսպորտային պատահարների հանգամանքների	13740	127	1745.0
Տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի	41220	18	742.0
Տրանսպորտային հետքաբանական	41220	17	700.7
Տնտեսագիտական	82440	490	40395.6
Ապրանքագիտական	13740	640	8793.6
Համակարգչատեխնիկական	68700	464	31876.8
Մշակութային արժեքների	54960	89	4891.4
Հոգեբանական	70074	141	9880.4
Դատաբժշկական	56792	304	17264.8

Դատաքիմիական (թունաբանական)	9618	2976	28623.2
Դատագենետիկական (ԴՆԹ-նույնականացման)	119080	8	952.6
Օդորոլոգիական (այդ թվում մարդու կողմից թողնված հոտային հետքերի)	27480	11	302.3
Ճարտարագիտատեխնիկական	68700	186	12778.2
Լինգվիստիկական	70074	11	770.8
Դատաէկոլոգիական	27480	46	1264.1
Ընդամենը		**10666**	**304372.1**